

## ՏԵՂԵԿԱՆՔ

## ՀՀ Շիրակի մարզում աղբահանության աշխատանքների վերաբերյալ

- Արձանագրված աղբանոցներ-337
- Փակված աղբանոցներ- 228
- Չփակված՝ փակման ենթակա աղբանոցներ-22 (ունեն ֆինանսական խնդիրներ, յուրաքանչյուր աղբանոցի փակման համար անհրաժեշտ է միջինը 850.000 դրամ)

Նախկին չփակված 28 աղբանոցների համայնքների միջոցով փակվել է 6-ը:

Գյումրի 17-ից 3 – 14

Ախուրյան 4-2 – 2

Արթիկ 6- 0- 6

Առափի 1-1-0

Այսպես՝

ք. Գյումրի արձանագրվել է 50 աղբանոց, փակվել է 35-ը (70%)

Ախուրյանի տարածաշրջան 87՝ փակվել է 61-ը (70.1 %)

Արթիկի տարածաշրջան 75՝ փակվել է 49(65.3%)

Անիի տարածաշրջան 38՝ փակվել է 23 (60.52%)

Աշոցքի տարածաշրջան 56՝ փակվել է 41(73.21%)

Ամասիայի տարածաշրջան 31՝ փակվել է 19 (61.29%)

Ընդամենը 228 փակված (67.65 %) (եթե սրան գումարում ենք 22 փակման ենթակա աղբանոցների թիվը %-ը դառնում է 74):

Շահագործվող աղբանոցները 87-ը

Ցանկը եթե անհրաժեշտ է հրապարակել (կից)

Աղբահանություն իրականացնող համայնքների թիվը (79 – համայնքների դեպքում 48-ը (ցանկը կից)

Խոշորացված համայնքների 25 բնակավայրերում Անի համայնք-13, Ախուրյան համայնք-2 Մարմաշեն -8, Արփի-1, Սարապատ-1 և 6 համայնքներում(Հովտաշեն, Հայկասար, Վարդաքար, Տուֆաշեն, Բայանդուր, Ղարիբջանյան) աղբահանություն չի իրականացվում

Աղբահանություն իրականացնելու նպատակով 79 համայնքներից աղբահանության գծով ծախս նախատեսվել է թվով 65 համայնքներում:

1

Բյուջեում աղբահանության իրականացման գումարների մուտքը կազմել է 162 մլն. 18 հազար դրամ,

Որից՝ 80.5 մլն. գանձվել է ֆիզիկական անձանցից,

81.7 իրավաբանական անձանցից:

Անցած տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ավելի է գանձվել 24 մլն. դրամ:

Աղբահանության աշխատանքների համար կատարված ծախսը կազմում է 214 մլն. 537 հազար դրամ: Այստեղ 100 մլն. դրամ Գյումրու քաղաքային բյուջեից աղբահանության աշխատանքները առանձին կազմակերպության կողմից իրականացնելու նպատակով հատկացվել է նոր կազմակերպության ձևավորման համար: Կից անհատական ցուցակը:

Աղբահանությունը իրականացնում են մասնավոր ձեռնարկությունների միջոցով 22 համայնք (26 իր միջոցով) :

Աղբահանություն իրականացնող կազմակերպությունների թիվը՝ 6 (Գյումրու կոմունալ տնտեսություն ԲԲԸ, <<Արթիկի կոմունալ տնտեսություն >> ԲԲԸ, Արամայիս Համբարյան Ա/2, <<Ճանշին>> ՓԲԸ, Շինարար <<Նարե>> ՓԲԸ, <<Ա.Վ.Ա ՇԻՆ >> ՍՊԸ):

Աղբահանության ծառայությունները իրավապայմանագրային հիմքի վրա դնելու նպատակով ՀՀ Շիրակի մարզպետի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 01/6230 -17 գրությամբ մարզի համայնքների ղեկավարներին առաջարկվել է ճշտել համայնքների վարչական տարածքներում գործող իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի թիվը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նրանց հետ կնքել աղբահանության կազմակերպման պայմանագրեր:

Պատկերը հետևյալն է 17 համայնք (կից ցանկը):

Գումար գանձվում է 8 համայնքի կողմից Գյումրի, Արթիկ, Մարալիկ քաղաքներ, Ագատան, Ախուրյան, Բենյամին , Պեմգաշեն, Ամասիա համայնքները:

Պայմանագրերի առկայության դեպքում 9 համայնքներում գանձում չի կատարվում (Մարապատ, -5 Փանիկ 13, Առափի 2, Ոսկեհասկ-2, Հայկավան-2, Անուշավան-10, Սպանդարյան -8, Մեծ Մանթաշ-1, Աշոցք- -6):

Համայնքների ղեկավարներին ներկայացվել է նաև առաջարկություններ իրավաբանական անձանց աղբահանության գործառնական նշանակությամբ սահմանված սակագների վերաբերյալ:

2

Գանձումները կատարվում են՝ իրավաբանական անձանցից գործառնական նշանակությամբ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից առաջարկված սակագներով /դրամ/քմ/ բացառությամբ Գյումրու քաղաքապետարանի որտեղ դրամ/քմ 50 դրամ:

Ֆիզիկական անձանցից համայնքների ավագանիների որոշմամբ

- Գյումրի 1 անձը -100 դրամ
- Արթիկ 1 անձը- 120 դրամ
- Մարալիկ 1 անձը- 100 դրամ
- Ամասիա – 1 անձը 100 դրամ (միայն Ամասիա բնակավայրը)
- Ախուրյան 1 անձը-150 դրամ բայց ոչ ավելին քան 800 դրամ յուրաքանչյուր ընտանիքից (շրջիկ ծառայության դիմաց յուրաքանչյուր ընտանիքից 500 դրամ)
- Ագատան- 1 անձը 100 դրամ
- Այստեղ պետք է նշել , որ ավագանիների կողմից դրույքաչափերի վերանայման խնդիր կա, քանի որ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից առաջարկվել է աղբահանության դրույքաչափերի կիրառման մեթոդական նոր ուղեցույցը՝

Աղբի տարբեր տեսակների համար կարող են սահմանվել ստրոն ներկայացվող տարբեր դրույքաչափեր՝ հաշվի առնելով աղբի գոյացման վայրի (անշարժ գույքի) նպատակային կամ գործառնական նշանակությունը:

1. Բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը սահմանվում է.

- 1) Ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 50-ից 400 դրամ , կամ
- 2) Ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 5-ից 25 դրամ:

2. Համայնքներում առկա ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում, այդ թվում՝ հասարակական, հանրային, ծառայությունների մատուցման, արտադրական, արդյունաբերական շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

- 1) Առևտրի (այդ թվում՝ շուկաների) , հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայությունների իրականացվող շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 50-ից 100 դրամ,

3

- 2) Հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայություններ , ինչպես նաև այլ գործունեություն իրականացնող հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 20-ից 50 դրամ,

- 3) Արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 5-ից 15 դրամ,
- 4) Կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար 3-ից 15-դրամ.
- 5) Շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարն ամբողջությամբ հաշվարկել առավել բարձր դրույքաչափով:

**Համայնքների խնդիրները**

1. Ուսումնասիրել Աշոցք, Մարապատ, Ամասիա, Արփի, Անի, Ախուրյան, Մարմաշեն համայնքների շահագործվող աղբավայրերի տեղաբաշխումը և ներկայացնել համայնքի տարածքում առկա աղբավայրերից որոնք են ենթակա փակման և հիմնավորումներ որոնք են ենթակա շահագործման:

- Ստեղծել պայմաններ մեկ ընդհանուր աղբավայր կառուցելու համար և աղբահանություն կազմակերպել Անի-13, Ախուրյան 2, Մարմաշեն-8 բնակավայրերում, Հովտաշեն, Հայկասար, Վարդաքար, Տուֆաշեն, Բայանդուր, Ղարիբջանյան, Արփի և Մարապատ համայնքներում:
- Աղբահանության պայմանագիր կնքել տարածքում գործող բոլոր իրավաբանական անձանց հետ:
- Ապահովել անհրաժեշտ մակարդակի գանձումներ աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները սկսած 2018 թվականից ինքնածախսածածկման եղանակով կատարելու համար:
- Լուրջ ուշադրություն դարձնել չսահմանված վայրերում աղբ թափելու արգելման աշխատանքների կազմակերպմանը՝ «Վարչական իրավախախտումների մասին» օրենքի 43 պրիմ «Աղբահանության աշխատանքները ժամանակին չկազմակերպելը, չսահմանված վայրում աղբ թափելը, աղբահանության համար անհրաժեշտ պայմանները չապահովելը հողվածի կիրարկման ուղղությամբ:
- Անի, Ախուրյան, Մարմաշեն համայնքներում անհրաժեշտ է լուծել աղբահանության աշխատանքները կատարող կազմակերպության հետ գործող նախկին պայմանագրերը կազմել նոր պայմանագրեր:

4

- Փակման ենթակա- 22 աղբանոցները փորձել փակել համայնքային միջոցների հաշվին:

- Վերջնականապես լուծել չսահմանված վայրերում աղբ թափելը արգելող վահանակների տեղադրման հարցը:
- Գյումրի, Արթիկ Մարալիկ քաղաքային, Աշոցք, Ախուրյան, Ամասիա գյուղական բնակավայրերի վարչական տարածքներում գործող իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի, անշարժ գույքի սեփականատերերի կամ տիրապետողների՝ իրենց տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրա հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգում իրականացնելու վերաբերյալ ծավալված աշխատանքները անհրաժեշտ է արագացնել Գյումրու, Աշոցքի, Ամասիայի (ավագանին ընդունել է որոշում, Անին և Ախուրյանը նոր է ձևավորվել, Արթիկը ընթացքի մեջ է): Որպես նորմատիվային ակտ ՀՀ արդարադատության նախարարություն գրանցման է ներկայացրել միայն Գյումրի համայնքը:

